

ՍԱՂՄՈՍ 16

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
ՏԵՐԸ Սաղմոսերգուի կյանքի բաժինն է և փրկիչը մահվան ժամանակ	Հավատարիմների հույսը և Մեսիայի հաղթանակը	Անձնական հավատքի քայլ Աստծո զո- րությամբ փրկվելու (Վստահության երգ)	Վստահության աղոթք	Յահվեն իմ ժառանգությունը
<u>MT նախաբան</u> «Դավթի երգը»				
16:1-4	16:1 16:2-3 16:4	16:1-2 16:3-4	16:1-3 16:4	16:1 16:2-3ա 16:3բ-6
16:5-6	16:5-6	16:5-6	16:5-6	
16:7-11	16:7-8 16:9-11	16:7-8 16:9-10 16:11	16:7-8 16:9-10 16:11	16:7-8 16:9-11

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՅԻՎԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») *ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԵՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

<p>NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 16:1-4</p> <p>¹Պահպանիր ինձ, ո՛վ Աստված, քանի որ հույս Քո վրա է:</p> <p>²ՏԻՐՈՋՆ ասացի. «Դո՛ւ ես իմ ՏԵՐԸ, Քեզանից բացի, ուրիշ բարիք չունեմ»:</p> <p>³Երկրում եղող սրբերի ու փառավորների վրա է իմ ամբողջ հաճությունը:</p>

**4Շատանալու են նրանց ցավերը,
Որ ուրիշ մի աստծու են հետևում,
Նրանց խմիչքի ընծաները, որոնք արյունից են,
Ես չեմ մատուցի, ու նրանց անունները
Չեմ առնի իմ շուրթերին:**

16:1 «Պահպանի՛ր ինձ, ո՛վ Աստված» Սա Սաղմոս 16-ում միակ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆ Է (BDB 1033, KB 1570, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ): Սա շտապ աղոթքի խնդրանք է: Սաղմ.16:10-11-ից ակնհայտ է դառնում, որ սաղմոսերգուն առերեսվում է մահվան հետ: Նա խնդրում է կյանք, բայց գիտի որ սույնիսկ մահը նրան չի բաժանի Աստծուց (տես՝ Հոմ. 8:31-39):

Այս Սաղմոսում Աստված կոչվում է՝

1. *El*, Սաղմ. 16:1 (ՀՄԱ-ում Աստծո ընդհանուր անունը)
2. ՅԱՀՎԵ, Սաղմ. 16:2,5,7,8
3. *Adon*, Սաղմ. 16:2

Տե՛ս ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ԱՆՈՒՆՆԵՐԸ:

❖ **«քանի որ հույսս Քո վրա է»** Սա շատ Սաղմոսների թեման է: «Ապաստան/հույս» բառի համար տե՛ս Սաղմ. 5:11-ի գրառումը:

Մարդիկ ստեղծվել են հենց Աստծո պատկերով և նմանությամբ (տես՝ Ծննդ. 1:26-27): Մենք ստեղծվել ենք հաղորդակցվելու համար (տես՝ Ծննդ. 3:8): Մենք կարող ենք խաղաղություն, հանգստություն, ուրախություն, նպատակ և ապահովություն գտնել միայն Նրա մեջ:

16:2 Սա սաղմոսերգուի հավատքի դավանությունն է: Սաղմոս 16:2 կարծես թե ամփոփում է նախորդ աղոթքը կամ դավանությունը:

NASB	«Քեզանից բացի, ուրիշ բարիք չունեմ»
NKJV	«Իմ բարությունը ոչինչ է առանց Քեզ»
NRSV	«առանց Քեզ ոչ մի բարիք չունեմ»
TEV	«բոլոր բարիքները որ ունեմ, Քեզանից են գալիս»
REB	«միայն Քեզնից է գալիս այն բարիքը, որ վայելում եմ»
NET Աստվածաշունչ	«Իմ բարեկեցության միակ աղբյուրը»
JPSOA	
ծանոթագրություն	«ես միայն Քո մեջ բարիք ունեմ»

Այս արտահայտության մեջ գայթակղիչ է տեսնել ՆԿ-յան արդարացման վարդապետությունը, սակայն ՀԿ-ում ավելի լավ գուգահեռը Սաղմ. 73:25-28 է: ՅԱՀՎԵՆ է սաղմոսերգուի միակ «բարին»: Ազգերի կուռքերը սուտ են: Գթառատ, ողորմած, ուխտի Աստվածը պատվում է նրանց, ովքեր վստահում են Նրան և ապրում Նրա ուխտի պահանջների համաձայն (այսինքն՝ ՀԿ-ում՝ Մովսիսական ուխտը, ՆԿ-ում՝ ավետարանը, տես՝ Երեմ. 31:31-34, Եզեկ. 36:25-27): Արդյունքը Աստծո հետ այս կյանքում և հաջորդ կյանքում փոխհարաբերություն է:

16:3-4 Շատ հարցեր կան, թե ինչպես կարելի է հասկանալ այս համարները: Հրեական Սերտո-դության Աստվածաշունչը դրանց մասին ասում է (էջ՝ 1297), որ «սրանք Սաղմոսների մեջ ամենա-անհասկանալի համարներից են»:

1. Ովքե՛ր են «սուրբերը» (BDB 872): Որոշ (NEB, NJB) գիտնականներ վերցնում են Սաղմ. 16:2-ի վերջին խոսքերը և բացասական իմաստ հաղորդում Սաղմ. 16:3-ին, որը «սուրբերին» դարձնում է իբրև «երկրի սրբազան հոգիներ» (այսինքն՝ Սաղմ. 16:4-ի կուռքերը): Տե՛ս ստորև տրված գրառումը:

2. Ովքե՞ր են «փառավորները» (BDB 12): Չուգահեռականության պատճառով դրանք կան դրական են (այսինքն՝ աստվածահաճո են, տես՝ TEV) կամ բացասական (այսինքն՝ քանանացիների կուռքերը, NJB):

Հնարավոր է նաև այս երկու տիպոլոգիաները վերցնել որպես Սաղմ . 16:3-իում ուխտի ժողովրդին վերաբերող խոսքեր, որոնք դարձան կռապաշտներ Սաղմ . 16:4-ում: Շատ թարգմանություններ առանձնացնում են համար 3-ը համար 4-ից՝ դրանք դնելով տարբեր տողերում: Հարցն այն է, թե «Արդյո՞ք Սաղմ . 16:3-4 ձևավորում է հակադրություն, թե ավելի ընդլայնված նկարագրություն»:

16:3 «սուրբեր» Սա եբրայերեն *Kadosh* (BDB 872) տերմինն է, որը կիրառվում է՝

1. ՅԱՀՎԵԻ հավատարիմ հետևորդների համար՝ 2 Օր . 33:3, Սաղմ . 34:9, Դան . 8:24
2. հոգևոր էակների համար (այսինքն՝ հրեշտակները) – Հոր 5:1, 15:15, Սաղմ . 89:5,7, Դան . 8:13 (երկու անգամ), Չաք . 14:5:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՍՈՒՐԲ SPECIAL TOPIC: HOLY

I. Հին Կտակարան (նկարագրված է հիմնականում Եսայի գրքից)

Ա. *kadosh* տերմինի (BDB 872, KB 1072) ստուգաբանությունը անորոշ է, հնարավոր է, քանանական (այսինքն՝ Ուգարտական): Հնարավոր է, որ արմատի մի մասը (այսինքն՝ *kd*) նշանակում է «բաժանել»: Սա հանրաճանաչ սահմանման աղբյուրն է՝ «առանձնացված Աստծո գործածության համար (քանանական մշակույթից, տես՝ 2 Օր . 7: 6, 14:2,21, 26:19)»:

Բ. Այն վերաբերում է Աստծո ներկայությանը բաներում, վայրերում, ժամանակներում և մարդկանց մեջ: Այն չի հանդիպում Ծննդոցում, սակայն տարածված է Ելից, Դևտացոց և Թվոց գրքերում:

Գ. Մարգարեական գրականության մեջ (հատկապես Եսայիա և Ովսիա) նախկինում եղել է անձնական տարր, բայց նախապես չի շեշտվում (տես՝ Հատուկ Թեմա. Սուրբը): Այն դառնում է Աստծո էությունը բնութագրելու ձև (տես՝ Ես . 6:3): Աստված սուրբ է: Նրա բնավորությունը ներկայացնող անունը Սուրբ է: Նրա ժողովուրդը, ովքեր պետք է բացահայտեն Իր կերպարը կարիքավոր աշխարհին, սուրբ են (եթե նրանք հնազանդվում են հավատքով ուխտին):

1. ԱԾԱԿԱՆ, BDB 872, ԺՂԿ, «սուրբ» օգտագործվում է

ա. Աստված, Ես . 5:16, 6: 3 (երեք անգամ), տես՝ Հատուկ Թեմա. Սուրբը
բ. Նրա անունը, Ես . 40:25, 49:7, 57:15գ. Նրա բնակվելու տեղը, Ես . 57:15
դ. Նրա Շաբաթը, Ես . 58:13

2. ԲԱՅ, BDB 872, ԺՂԿ «առանձնացնել», «նվիրվել»

ա. Աստծո բնավորությունը, Ես . 5:16, 29:23
բ. Աստված, Ես . 8:13, 65: 5
գ. Աստծո հրեշտակները, Ես . 13: 3
դ. Աստծո անունը, Ես . 29:23
ե. փառատոն, Ես . 30:29
զ. Օծյալ, նվիրված մարդիկ, Ես . 66:17

3. ԳՈՅԱԿԱՆ, BDB 871, ԺՂԿ, «առանձնացում», «սրբություն»,

ա. սուրբ սերունդ, Ես . 6:13
բ. սուրբ լեռ, Ես . 11:9, 27:13, 56:7, 57:13, 65: 11,25, 66:20
գ. առանձնացնել, Ես . 23:18
դ. սրբության ձև, Ես . 35: 8
ե. սրբավայր, Ես . 43:28, 62:9, 64:11
զ. սուրբ քաղաք, Ես . 48: 2, 52:1
է. Սուրբը, Ես . 49: 7 (տես՝ Հատուկ Թեմա. Սուրբը)
ը. սուրբ բազուկ, Ես . 52:10

- թ. Սուրբ օր, Ես. 58:13
- ժ. սուրբ ժողովուրդ, Ես. 62:12
- ի. Սուրբ Հոգի, 63: 10,11
- լ. Աստծո գահը, Ես. 63:15
- խ. սուրբ վայր, Ես. 63:18
- ծ. սուրբ քաղաքներ, Ես. 64:10

Գ. Աստծո ողորմությունը և սերը անբաժանելի են ուխտերի, արդարության և էական բնույթի աստվածաբանական գաղափարներից: Այստեղ է Աստծո լարվածությունը ոչ սուրբ, մեղավոր, ապստամբ մարդկության հանդեպ: Մի շատ հետաքրքիր հոդված կա կապված Աստծո ողորմության և սուրբ լինելու հետ, Robert B. Girdlestone, Synonyms of the Old Testament, էջ 112-113:

II. Նոր Կտակարան

Ա. Նոր Կտակարանի հեղինակները (բացի Ղուկասից) եղել են եբրայերեն մտածողներ, բայց գրել են Կոյնե հունարենով: Նոր Կտակարանի եկեղեցին օգտագործել է Հին Կտակարանի հունարեն թարգմանությունը՝ Սեպտուագինտան: Հին Կտակարանի հունարեն թարգմանությունն էր, ոչ թե դասական հունարեն գրականությունը, մտածողությունը կամ կրոնը, որը վերահսկում էր նրանց բառապաշարը:

Բ. Հիսուսը սուրբ է, քանի որ Նա Աստծուց է և Աստծո նման է (տես՝ Ղուկ. 1:35, 4:34, Գործք 3:14, 4: 27,30, Հայտ. 3: 7): Նա Սուրբ և Արդար է (տես՝ Գործք 3:14, 22:14): Հիսուսը սուրբ է, քանի որ Նա անմեղ է (տես՝ Հովհ. 8:46, 2 Կոր. 5:21, Եբր. 4:15, 7:26, 1 Պետ. 1:19, 2:22, 1 Հովհ. 3: 5):

Գ. Քանի որ Աստված սուրբ է (տես՝ Հովհ. 17:11, 1 Պետ. 1:15-16, Հայտ. 4:8, 6:10), Նրա զավակները պետք է սուրբ լինեն (տես՝ Ղևտ. 11:44-45, 19:2, 20:7,26, Մատթ. 5:48, 1 Պետ. 1:16): Քանի որ Հիսուսը սուրբ է, Նրա հետևորդները պետք է սուրբ լինեն (տես՝ Հռոմ. 8: 28-29, 2 Կոր. 3:18, Գաղ. 4:19, Եփես. 1:4, 1 Թեսաղ. 3:13, 4:3, 1 Պետ. 1:15): Քրիստոնյաները փրկվել են, ծառայելու Քրիստոսանմանության մեջ (սրբություն):

16:4

**NASB, NKJV,
NRSV
TEV
NJB
LXX
REB**

**«վշտեր»
«անհանգստություններ»
«վխտացող կուռքեր»
«տկարություններ»
«անվերջ անհանգստություն»**

«Անհանգստություններ» (תבצצ, BDB 781) շատ նման է «կուռքեր» (תבצצ, BDB 781, NJB): Ակնհայտ է, որ համատեքստը կռապաշտության մասին է: Այն, թե Սաղմ. 16:3-ը ստույգ ում է ուղղված, անհայտ է:

Հնարավոր է տեսնել «մեկ այլ» տերմինը (תבצ, BDB 29 I, Սաղմ. 16:4) որպես «այլ աստվածներ» (תבצצ տես՝ Ես. 42:8, NET Աստվածաշունչ, էջ՝ 866, #29):

Ավելի համապարփակ քննարկման համար տես՝ NIDOTTE, հատոր 2, էջ՝ 860-862-ում կամ UBS ձեռնարկի էջ 141-142-ում զետեղված քննարկումը:

- ❖ Սաղմոսերգուն, որը ապաստան է գտել ՅԱՀՎԵԻ մեջ, հրաժարվում է՝
 1. արյան խմելու գոհ թափելու (կենդանիների գոհեր կամ գինու փոխաբերությունը)
 2. նրանց անուններն իր շուրթերի վրա առնելու (տես՝ Ել. 20:3-5):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 16:5-6
⁵ՏԵՐՆ Է ԻՄ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒ ԲԱԺԱԿԻ ԲԱԺԻՆՐ.
ԻՄ ՎԻՃԱԿՐ ՔՈ ձԵՌՊՈՒՄ Է:

**Ինձ վիճակվել են ցանկալի տեղեր,
Հիրավի, ես լավ ժառանգություն ունեմ:**

16:5-6 Հավանական է, որ համար 4-ում նշված խմելու զոհաբերությունը սաղմոսերգուին հիշեցնում էր «բաժակ» դարձվածքը, որը մատնանշում է մարդու ճակատագիրը (տես՝ Սաղմ. 11:6, 23:5, 75:8, 116:13): Սովորաբար սա ունի ժխտական իմաստ, սակայն ոչ այստեղ:

«Վիճակը» ակնարկում է Քանանի երկրի բաժանումը ցեղերի միջև իրենց հողն ունենալուն, որն արեց Հետուն՝ վիճակ գցելով (տես՝ Հեսու 13-19), որը ՅԱՀՎԵԻ կողմից Աբրահամին տրված խոստման մարգարեական իրականացումն էր (տես՝ Ծննդ. 12:1-3): Ղևտացիները և Քահանաները ժառանգեցին միայն 48 քաղաք (տես՝ Հեսու 20-24): Նրանց ասվել էր, որ իրենց բաժինը՝ ժառանգությունը, հենց Տերն Ինքն է (տես՝ Թվոց 18:20, 2 Օրին. 18:1): Սակայն Սաղմոսներում այս նշանակությունը տարածվում է բոլոր հավատարիմ հետևորդների վրա (տես՝ Սաղմ. 73:26, 119:57, 142:5, նաև՝ Ողբ 3:24):

Սաղմոս 16:6 շարունակում է այս տեսարանը «ինձ վիճակվել են ցանկալի տեղեր» արտահայտությամբ: Սաղմոսերգուն պնդում է, որ իր ժառանգությունը գեղեցիկ է (այսինքն՝ Երեմ. 3:19):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 16:7-11

⁷Օրհնելու եմ ՏԻՐՈՋԸ, որ խրատում է ինձ.

Նաև իմ երիկամունքն են գիշերվա մեջ ինձ հորդորում:

⁸Միշտ ՏԻՐՈՋՆ եմ դնում իմ առջև,

Ու քանի որ Նա իմ աջ կողմում է, չեմ սասանվելու:

⁹Այս պատճառով էլ սիրտս ուրախ է, և փառքս բերկրանք է ապրում,

Ու մարմինս էլ հույսով է հանգստանում:

¹⁰Քանի որ Դու իմ անձը դժոխքի մեջ չես թողնի

Եվ Քո սրբին ապականություն տեսնել չես տա:

¹¹Կենաց ճամփան ես ցույց տալու ինձ.

Քո ներկայության մեջ ուրախությունների լիություն կա,

Քո աջ կողմում՝ հավերժ քաղցրություններ:

16:7-11 Սաղմոսերգուն պնդում է իր հավատքը ՅԱՀՎԵԻ՝

1. խորհրդի վրա, Սաղմ. 16:7ա (տես՝ Սաղմ. 32:8)
2. խրատների վրա՝ Սաղմ. 16:7բ
3. գորավոր ներկայության վրա՝ Սաղմ. 16:8,11
4. հաղթանակի վրա՝ Սաղմ. 16:8բ

Արդյունքում նա ցնծում է ՅԱՀՎԵԻ մեջ իր ունեցած ապահովությամբ (տես՝ Սաղմ. 16:9), անգամ մահվան մեջ (Սաղմ. 16:10-11):

1. Նա չի թողնի սաղմոսերգուին *Շեղում*՝ Սաղմ. 16:10 (տես՝ Հոբ 14:14-15, 19:25-27)
2. Նա նրան կհայտնի կյանքի ճանապարհը (տես՝ Սաղմ. 139:24, Առակ. 15:24, այսինքն՝ ամենօրյա հավատարիմ ապրելակերպի դարձվածք. նմանօրինակ արտահայտության համար տես՝ Սաղմ. 139:7-8):
3. Նա անձնապես նրա հետ կլինի՝ անգամ *Շեղում* (տես՝ Սաղմ. 139:7-8)
4. Նա ապահովում է սաղմոսերգուի բոլոր կարիքները առատությամբ

Անգամ նեղության ժամանակներում հավատարիմ հետևորդը կարող է իմանալ, որ ՅԱՀՎԵԻ նրա հետ է, իր կողմից է, և երբեք չի թողնի, չի լքի իրեն: ՅԱՀՎԵԻ հավատարմության վրա ունեցած այս հավատքն է մեր հույսը, ուրախությունը, խաղաղությունը, հանգիստը և հաղթանակը:

16:8բ «Նա իմ աջ կողմում է» ՅԱՀՎԵԻ աջ կողմը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾ ՆԿԱՐԱԳՐՎԱԾ ՈՐՊԵՍ ՄԱՐԴ (ԱՆՏՐՈՊՈՍՈՐՖԻԶՄ)): Աջ կողմը այլաբանորեն նշանակում է

գորություն և իշխանություն: Մեսիան նկարագրվում է որպես Աստծո աջ կողմում նստած, որը մատնանշում է գորության, գերազանցության և իշխանության վայրը:

Այս Սաղմոսում մի քանի տարրերի համադրությունը Առաքյալների, Պետրոսի և Պողոսի համար այն դարձրել է Մեսիական՝

1. աջը կողմի տեսարանը՝ Սաղմ . 16:8,11
2. կյանքը ֆիզիկական գոյությունից էլ դուրս
3. «Սուրբ» տիտղոսը

Տե՛ս ավելի ծավալուն գրառումը Սաղմ . 16:10-ում:

16:9

NASB, NKJV	« իմ փառքը »
NRSV, NJB	« իմ անձը »
LXX	« իմ լեզուն »
JPSOA	« իմ ամբողջ էությունը »
REB	« իմ հոգին »

Եբրայերեն «փառք» (כבוד, BDB 458 II) բառը հնարավոր է լինի դպրական սխալ «յարդ» բառի փոխարեն (כבוד BDB 458, տես՝ Ծննդ . 49:6, Սաղմ . 30:12), որը ինչպես սիրտը, մատնանշում է մարդու ամբողջ էությունը (տես՝ NIDOTTE, հատոր 2, էջ՝ 587-588, NET Աստվածաշունչ, էջ՝ 866. #11): Ուշադրություն դարձրեք, որ «սիրտ», «յարդ/փառք» և «մարմին» բառերը բոլորն էլ համագործնել են և մատնանշում են հենց սաղմոսերգունին:

16:10

NASB, NKJV	« Քո Սրբին »
NRSV, JPSOA	« քո հավատարմին »
NJB, REB	« քո հավատարիմ ծառային »
LXX	« քո նվիրյալին »
NET Աստվածաշունչ	« քո հավատարիմ հետևորդին »

Եբրայերենը տալիս է «քո աստվածավախին» (כבוד, BDB 339): Այս բառը հաճախ է կիրառվում՝ նկարագրելու ուխտի այն մարդկանց, ովքեր սիրում, ծառայում և հնազանդվում էին ՅԱՀՎԵԻՆ (տես՝ Սաղմ . 4:3, 12:1, 32:6, 86:2, Միքիա 7:2): Երբ կիրառվում է ՅԱՀՎԵԻ համար, այն թարգմանվում է «ուղիղ, արդար» (տես՝ Սաղմ . 18:25, 145:17) կամ «ողորմած» (տես՝ Երեմ . 3:12):

Քանի որ այս համարը մեջբերում է թե՛ Պետրոսը (տես՝ Գործք 2:27,31) և թե՛ Պողոսը (տես՝ Գործք 13:35) նկատի ունենալով Հիսուսի հարությունը, այս Սաղմոսում տերմինը թարգմանվում է «Սուրբը» (NASB, NKJV): Ես համոզված չեմ, թե ինչպես կարելի է դիտարկել այս համարը Սաղմոս 16-ում: Համատեքստում այն հստակ վերաբերում է աստվածավախ, հավատարիմ Իսրայելացու (ուշադրություն դարձրեք Սաղմ . 16:10-ի գուգահեռականությունը): Ուստիև այն կարող է Առաքյալի կողմից հասկացվի որպես՝

1. մարգարեական
2. տիպաբանական
3. բազմակի իրականացմամբ

Առաքյալը հետ է նայում ՀԿ-ի մեջ և տեսնում շատ նշաններ և ստվերներ, ինչպես նաև հատուկ կանխատումներ, որոնք վերաբերում էին Հիսուս Քրիստոսի կյանքին, գործին, մահվանը, հարությանը և վերադարձին: Ես վստահում եմ նրանց ներշնչանքին:

NASB, REB	« վիհը »
NKJV, LXX	« ապականություն »
NRSV, JPSOA	« վիհը »
NJB	« անդունդը »

MT տալիս է «Վիհ, անդունդ» (BDB 1001) և որը *Sheol*-ի (տես՝ Հոր 33:18, Ես. 38:17-18) համագորն է: *Շեոլի* համար տե՛ս՝ ՀԱՏՈՒՄ ԹԵՄԱ. Որտե՞ղ են մեռելները և Սաղմ. 6:5, 9:13-ի գրառումները: Երկուսն էլ մահվանը նկատի ունեցող կերպեր են:

LXX մեջբերվում է թե՛ Պետրոսի և թե՛ Պողոսի կողմից Գործքում՝ հաստատելու Հիսուսի հարությունը: Գոյություն ունեն մի քանի տեղեր ՀԿ-ում, որոնք հաստատում են կամ զոնե ակնարկում են հարությունը (տես՝ Հոր 14:14-15, 19:25-27, Սաղմ. 17:15, 49:15, 56:13, 73:24, 25, 86:13, Ես. 26:19, Դան. 12:2): Եզեկիել 37 թվում է, թե վերաբերում է ազգերի վերականգնմանը և ոչ թե անհատական հարությանը:

Փառք Աստծուն ՆԿ-ի ամբողջական հայտնության համար:

1. Հիսուսի դատարկ գերեզմանը և հարությունից հետո Նրա հայտնությունները

2. 1 Կորնթացիների 15-ում Պողոսի կողմից հարության վերաբերյալ քննարկումը

Հանդերձյալ կյանքը պրոգրեսիվ հայտնություն է:

Հիսուսի կյանքը, ուսմունքները, մահը և հարությունը փոխեցին Առաքյալների աշխարհայացքը: Նրանց ՀԿ-յան կարծիքները թարմացվեցին: Նրանք սկսեցին հետազոտել ՀԿ-ը մարգարեությունների, նմանաբանությունների և այս նոր իրողության ակնարկներ գտնելու համար: Հնարավոր է Հիսուսն Ինքը սկսել էր Իր մասին ՀԿ-ից այս հայտնության մեկնաբանություններով այն երկու աշակերտներին, որ գնում էին Էմմաուս, որոնք էլ այս բոլորը փոխանցեցին Վերնատանը գտնվող աշակերտների խմբին (տես՝ Ղուկ. 24:25-27):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Սահմանե՛ք «սուրբեր» բառը:

2. Արդյո՞ք «սուրբերը» նույնն են ինչ «վեհափառները»:

3. Ի՞նչ կապ ունի Սաղմ. 16:4 համարը կռապաշտության հետ:

4. Սահմանե՛ք ՀԿ-ի «բաժին» տերմինի կիրառությունը: Արդյո՞ք այն «վիճակ» բառի համագորն է:

5. Մարդկային մարմնի ո՞ր օրգանն է համարվում մտքերի և զգացմունքների բուն աղբյուրը:

6. Արդյո՞ք սա Մեսիական Սաղմոս է, քանի որ Սաղմ. 16:10-ը մեջբերվում է Գործք 13:35-ում:

7. Ինչո՞ւ է աստվածաշնչյան հավատքը նկարագրվում որպես «ճանապարհ»: